Դանիել Վարուժան

Երեք քոյրեր

Անոնք երեք քոյրեր էին
Նըման երեք Շընորհներուն.
Երեքն երեք ուխտեր ըրին
Առչևն երեք բագիններուն:

Երեցն ըսավ.- «Դի՛ք կայծակի,
Քե՛զ կը ձոնեմ մազերս ոսկի:»-

Միչնեկն ըսավ.- «Ըզգա՛ստ Հիմեն,
Քե՛զ կ՚ընծայեմ մատնիս հրեղեն:»-

Կըրտսերն ըսավ.- «Վավա՛շ Աստղիկ,
Ա՛ռ իմ կոյսի գոտիս ծաղիկ:»-

Ո՛վ որ մազերն ձոնեց Զևսի՝
Յոթը ազգի յոթ խույր կապեց
Գահին վըրա Արտաշեսի:

Ո՛վ որ մատնին տվավ Հիմենին՝
Յոթը չըքնաղ հերոս ծընավ
Գերահըզոր Հայաստանին:

Ո՛վ կույս գոտին մեչքեն ձըգեց՝

Ան՝ տառապյալ քույրը եղավ,
Եվ շուկային մեջ նուռ ծախեց: